ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

06.հոկտեմբերի. 2011թ. գյուղ Կաթնաղբյուր

2011թվականի հոկտեմբերի 06-ին Կաթնաղբյուրի գյուղապետարանում տեղի ունեցավ Կաթնաղբյուր համայնքի հաշվետու ժողովը:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ

1. Անանիկ Գաբրիելյան
2. Արամայիս Համբարձումյան
3. Նվեր Մկրտչյան
4. Լևոն Դանիելյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Համայնքի ղեկավարի տեղակալ Լ. Ասատրյան
2. Աշխատակազմի քարտուղար Գ. Մկրտչյան
3. Առաջատար մասնագետ Վ. Ղազարյան
4. Առաջատար մասնագետ Գ. Հարությունյան
5. Առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան

Մասնակցում էին համայնքի 30 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2010թվականի 2-րդ կիսամյակի և 2011թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Ք. Ասատրյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին»,«Համայնքային ծառայության մասին»

օրենքներով և այլ իրավական ակտերով Կաթնաղբյուր համայնքի աշխատակազմը որոշ աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:
Համայնքային ծառայության աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով, բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքացիների ընդունելությունը համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը:
2011թվականի հունիսի 29-ի դրությամբ բյուջեն կատարվել է 86 %-ով, ֆինանսական պարտավորությունները համայնքը չունի:

Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ձեռք են բերվել 12մ ջրահեռացման խողովակներ և տեղադրվել են Կաթնաղբյուր համայնքի 2-րդ և 5-րդ փողոցների հատման մասում:
Խճապատվել է 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցները, 2-րդ փողոցի 1-ին և 2-րդ փակուղիները:
Վերանորոգվել է դպրոցի շենքի տանիքը:
Կատարվել է բակի կանաչապատման աշխատանքներ:
Գյուղապետարանի համար ձեռք է բերվել համակարգիչ և կահույք:
Սև հողեր կոչվող հանդամասի ճանապարհի, 4-րդ փողոցի վերջնամասի, 5-րդ փողոցի սկզբնամասի անանցանելի մասերի փոսերը լցվել են հողային գրունտով և հարթեցվել են:
Համանքի 1-ին փողոցի և 2-րդ փողոցի մի մասի ապահովվել է գիշերային լուսամփոփներով:
Վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը:
Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է համայնքում առկա է 197.61 հա գյուղ նշանակության հողատարածք, որից վարելահող 109,39, արոտ 42,31 հա,այլ հողել 45,91 հա: Վարձակալությամբ հատկացվել է 21,3 հա:
Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայնությունը:
Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:
Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ.

1. Համայնքի 4-րդ փողոցի բնակիչներ Շահեն Մկրտչյանը, Գագիկ Խաչատրյանը, Նիկողոս Կոստանդյանը, Անդրանիկ Մելքոնյանը, որոնք համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեցին դրական և իրենց դժգոհություն արտահայտեցին համայնքի 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման վերաբերյալ:
2. Համայնքի 1-ին փողոցի բնակիչները նշեցին, որ ոռոգման ջրի ջրատարը գտնվում է վատթար վիճակում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչները առաջարկեցին համայնքի ղեկավարին բարելավել աշխատանքներն համայնքի 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման և ոռոգման ջրի հարցի լուծման ուղղությամբ:

ՈՐՈՇՎԵՑ

1) Համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն
2) Ակտիվացնել աշխատանքները համայնքի ոռոգման ջրի և 4-րդ փողոցի խմելու ջրի մատակարարման հարցի լուծման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Ք. Ասատրյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին: Նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայքի աշխատանքային ներքին կարգապահությունը:
Աշխատակազմի ամենօրյա աշխատանք է համարվում հարկերի հավաքագրումը, քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը:
Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի սանիտարական մաքրության ապահովման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումներն ընդունել ի գիտություն:

Կաթնաղբյուր համայնքի ղեկավար՝/ / Ք. Ասատրյան